

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«11» ապրիլ 2019թ.

No 854 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԱՎԱԳ ԵՎ ՄԻՋԻՆ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂԵԳՐԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից ավագ և միջին բուժաշխատողներին պետական պատվերի շրջանակներում վերապատրաստման ուղեգրեր տրամադրելու գործընթացը կանոնակարգելու նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման Հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից ավագ և միջին բուժաշխատողներին պետական պատվերի շրջանակներում վերապատրաստման ուղեգրեր տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՎԱԳ ԵՎ ՄԻՋԻՆ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂԵԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից ավագ և միջին բուժաշխատողներին (այսուհետ՝ բուժաշխատողներ) պետական պատվերի շրջանակներում վերապատրաստման ուղեգրեր (այսուհետ՝ ուղեգիր) տրամադրելու ընթացակարգը:
2. Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը առողջապահության նախարարությանը հատկացնում է որոշակի քանակով պետական պատվերի վերապատրաստման տեղեր՝ ուղեգրեր:

2. ՈՒՂԵԳՐԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

3. Նախարարությունը հատկացված ուղեգրերը տրամադրում է Հայաստանի Հանրապետության մարզային և նախարարության ենթակայության բժշկական հաստատությունների բուժաշխատողներին՝ նախապատվությունը տալով Հայաստանի Հանրապետության մարզային ենթակայության բժշկական հաստատությունների բուժաշխատողներին:
4. Ուղեգիր տրամադրվում է՝
 - 1) պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) հետևյալ խմբերում ընդգրկված բուժաշխատողներին.
 - ա. ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված՝ նպաստառու բուժաշխատողներ,

- բ. հաշմանդամության խումբ ունեցող բուժաշխատողներ,
 - գ. հաշմանդամության խումբ ունեցող անչափահաս երեխա/ներ ունեցող բուժաշխատողներ,
 - դ. բազմազավակ՝ մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող բուժաշխատողներ,
 - ե. ընտանիքում ժամկետային պարտադիր զինծառայողներ (ամուսին/կին, զավակ) ունեցող բուժաշխատողներ,
 - զ. ընտանիքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողներ (ամուսին/կին, զավակ) ունեցող բուժաշխատողներ,
- 2) սույն հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետում չընդգրկված այն բուժաշխատողներին, որոնք իրենց անվճարունակ լինելու վերաբերյալ նախարարություն են ներկայացնում միջնորդագիր բուժհաստատության տնօրենի կամ լիազոր մարմնի կողմից:
5. Ուղեգիր ստանալու համար բուժաշխատողը նախարարություն է ներկայացնում դիմում և սույն հավելվածի 4-րդ կետի պահանջներից բխող փաստաթղթեր:
6. Ուղեգիր տրամադրելը մերժվում է սույն հավելվածի 5-րդ կետով նախատեսված փաստաթղթերի թերի լինելու կամ դիմումին կից պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու դեպքում: